

Հայ ժողովրդի պատմության ժամանակագրություն

1907 **հունվար** 1 Ծնվեց ֆրանսահայ նկարիչ Գարգունը:
մայիս 13 Երևանում գործարկվեց առաջին հիդրոէլեկտրակայանը:
մայիս 26 Սուլուխի կռվում զոհվեց հայ ազատագրական շարժման գործիչ Գևորգ Չաուշը:
հունիս 3 Ստոլիպինյան պետական հեղաշրջումը Ռուսաստանում:
հոկտեմբեր 29 Էջմիածնում մահացավ կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանը: (Ծնվ. 1820թ.-ին):
նոյեմբեր 23 Մահացավ հայ



գրականության դասական Պ. Պռոշյանը: (Ծնվ. 1837թ.-ին):

դեկտեմբեր 27 Փարիզում հրավիրվեց Թուրքիայի ընդդիմադիր կուսակցությունների և խմբերի ժողով, որին մասնակցեցին «Արմենիա», «Ռազմիկ» և «Հայրենիք» թերթերի ներկայացուցիչները:

1908 **փետրվար** 12 Կահիրեում վախճանվեց գրող և հրապարակախոս Արփիար Արփիարյանը: (Ծնվ. 1851թ.-ին):

փետրվար 17 Կազմակերպվեց Թեհրանի հայոց Ազգային խորհուրդը: 1911 թ. պաշտոնապես ճանաչվեց պետության կողմից և կոչվեց «Թեհրանի հայոց համայնական վարչություն»:

փետրվար 20 Ավարտվեց ՌԼԼԽանլու-Ջուլֆա երկաթուղու շինարարությունը:

հունիս 8 Վախճանվեց բանաստեղծ Գևորգ Դողդոխյանը: (Ծնվ. 1830թ.-ին, Դրիմի Գոգենլո գյուղում):

հունիս 24 Երիտթուրքերի հեղաշրջումը Թուրքիայում:

հունիս 24 Ծնվեց Արտեմ Ալիխանյանը, գիտնական-ֆիզիկոս: (Վախճ. 1978 թ.-ին):

հուլիս 23 Երիտթուրքերի հեղաշրջումը Թուրքիայում, սահմանադրության վերականգնումը:

օգոստոս 30 Թիֆլիսում վախճանվեց Մուրացանը (Գրիգոր Տեր-Հովհաննիսյան): (Ծնվ. 1854թ.-ին):

օգոստոս 31 Ծնվեց հայազգի ամերիկյան գրող Վիլյամ Սարոյանը Կալիֆորնիայի Ֆռեզնո քաղաքում: Նրա սկզբնական ստեղծագործությունները հարազատ հայկական ընտանիքի և այն ժամանակվա անբարենպաստ պայմանների մասին են: Այդպիսի փոքր պատմվածքների հավաքածուներից նշանակալի են «Իմ անունը Արամ է» (1940) և «Մարդկային կատակերգություն» (1943): Սարոյանի շատ պիեսներ, քնարական կամ արձակ, ներառյալ «Իմ սիրտը լեռներում է», որը բուռն ծափահարվեց 1939թ.-ին և «Քո կյանքի ժամանակը», որի համար նա 1940թ.-ին ստացավ «Պուլտիզեր» մրցանակ: Սարոյանը մերժում էր պարզները այն աշխատանքների համար, որոնք իր կարծիքով ավելի զովաբանական չէին քան մյուսները: (Վախճ. 1981թ.-ին):

սեպտեմբեր 20 Ծնվեց Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Առաջինը: (Վախճ. 1994թ.-ին):

նոյեմբեր 18 Ծնվեց Վիկտոր Համբարձումյանը (1908-1996), աստղաֆիզիկոս, ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի իսկական անդամ, ՀԽՍՀ գիտությունների ակադեմիայի նախագահ: (Վախճ. 1996թ.-ին):

1909 **հունվար** 13 Ծնվեց բազմավաստակ նկարիչ Միեր Աբեղյանը:

մարտ 31 Սկսվեց Ադանայի (Կիլիկիա, արևմտյան Հայաստան) հայերի կոտորածը: Երեք շաբաթվա ընթացքում մոտավորապես 30000 մարդ սպանվեց:

ապրիլ 14 Գահրնկեց արվեց սուլթան Աբդուլ Համիդը. Իշխանությունն անցավ երիտթուրքերի ձեռքը:

1910 **հունվար** 19 Ծնվեց հայ մեծանուն գրող Հրաչյա Քոչարը: (Վախճ. 1965թ.-ին):

օգոստոս 18 Ծնվեց հայ նկարիչ Հարություն Կալենցը: (Վախճ. 1967թ.-ին):

1910 **դեկտեմբեր** 11 Էջմիածնում վախճանվեց Մատթեոս Իզմիրյանը: (Ծնվ. 1845 թ.-ին):

1911 **մարտ** 8 Ծնվեց առաջադեմ կոմպոզիտոր Ալան Հովհաննեսը:

մայիս 14 Բաբվի Բայիլովի բանտում մահացավ ականավոր բոլշևիկ, պրոֆեսիոնալ հեղափոխական Բոգդան Կնունյանցը: (Ծնվ. 1878թ.-ին):

հունիս 20 Թիֆլիսում վախճանվեց նշանավոր մանկավարժ, գրող, հրապարակախոս Ղազարոս Աղայանը: (Ծնվ. 1840 թ.-ին):

դեկտեմբեր 13 Ամենայն հայոց կաթողիկոս ընտրվեց Գևորգ V-ը (Սուրենյանցը): (Վախճ. 1930թ.-ին):

(Շարունակելի)

Լուրեր

Իրան

Իրանական եւ հայկական գիտակրթական գերատեսչությունների միջեւ ստորագրվեց փոխըմբռնման հուշագիր

ԵՐԵՎԱՆ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Հայ-իրանական կրթական եւ գիտական հարաբերությունները 2005-2008թթ-ին ավելի զարգացնելու եւ ընդլայնելու համար այսօր Իրանի Իսլամական հանրապետության կրթության եւ դաստիարակության նախարար Սորթեգա Հաջին իր գործընկեր Սերգո Երիցյանի հետ ստորագրեց փոխըմբռնման հուշագիր:

Հուշագրում ներառվում են Հայաստանում պարսկերենի եւ իրանագիտության զարգացման, համապատասխանաբար նաեւ Իրանում հայոց լեզվի եւ գրականության զարգացման, դասագրքերում եւ ուսումնական նյութերում երկու երկրների մասին տեղեկատվության ընդգրկման, փաստաթղթերի փոխճանաչման գործընթացում դժվարությունների հաղթահարման, հանրակրթության ոլորտում տեղեկատվության փոխանակման, աշակերտների, ուսուցիչների, ուսանողների ու դասախասների փոխայցելությունների հարցերը: Փոխայցելությունների մի մասը կկազմակերպվի այս ամռան ընթացքում: Ս. Երիցյանը նշեց, որ հայկական կողմի համար կարեւոր է նախնական մասնագիտական կրթության, տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման ոլորտում գիտելիքների գնահատման եւ տեստավորման համակարգի վերաբերյալ երկու կողմերի միջեւ փորձի փոխանակումը: Նշվեց, որ մեծ ուշադրություն կդարձվի միջազգային գիտական համաժողովներին, սեմինարներին, գագաթնաժողովներին երկու կողմերի ներկայացուցիչների ներգրավմանը:

Սորթեգա Հաջին, արդյունավետ գնահատելով Հայաստան կատարած իր այցը, նշեց, որ բանակցությունների ընթացքում բարձրացված բոլոր հարցերի շուրջ ձեռք է բերվել համաձայնություն: Նա կարեւորեց երկու երկրների կրթական եւ գիտական հաստատությունների միջեւ հորիզոնական կապերի հաստատումը, որը ենթադրում է նաեւ համատեղ ծրագրերի իրականացում: Գիտակրթական հայկական եւ իրանական գերատեսչությունների միջեւ հարաբերությունները շարունակական դարձնելու նպատակով երկու նախարարներն էլ կարեւորեցին մատաղ եւ երիտասարդ սերունդերի միջեւ կապերի սերտացումը, որի համար ջանքեր պետք է գործադրվեն երկուստեք: Նախատեսվում են անցկացնել զեղանկարչական ցուցահանդեսներ, քատրակական ներկայացումներ, կինոփառատոներ: Կկազմակերպվեն ամառային ճամբարներ, օլիմպիադաներ, դաստիարակչական եւ մարզական մրցույթներ, որին կկարողանան մասնակցել երկու երկրների աշակերտներն ու ուսանողները: Հայկական եւ իրանական կողմերից ստեղծվել են աշխատանքային խմբեր, որոնք Իրանում կայանալիք առաջիկա

հանդիպմանը կքննարկեն օրակարգային որոշ հարցեր: Ս. Հաջին արդյունավետ համարեց կրթության եւ դաստիարակության հայկական մեթոդները: Նա դրական գնահատեց այն, որ այստեղ պատմական եւ մշակութային արժեքների պահպանության համար ներդրվում են մեծ միջոցներ: Անդրադառնալով Հայաստանում պարսիկ ուսանողների բժշկի եւ ճարտարապետի մասնագիտություններին նախապատվություն տալու հարցին նա նշեց, որ Իրանում նշված մասնագիտությունների նկատմամբ առկա է մեծ պահանջարկ: Իրանում ուսանող ՀՀ քաղաքացիների թիվը համեմատաբար ավելի քիչ է: Ս. Հաջին հույս հայտնեց, որ հետագայում նրանց թիվը կավելանա: Իրանի կրթության եւ դաստիարակության գերատեսչության ղեկավարը արդյունավետ գնահատեց նաեւ Աժ նախագահ Արթուր Բաղդասարյանի, վարչապետ Անդրանիկ Մարգարյանի եւ հայ-իրանական միջկառավարական հանձնաժողովի համանախագահ Արտաշես Թումանյանի հետ հանդիպումները:

Հայաստան

«ՀԱՅԱՍՏԱՆԸ ՈՒՆԻ ՄԱՅՐԱԿԱՆ ՄԱՀԱՑՈՒԹՅԱՆ ՄԻՋԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ»

«Թվերից այն կողմ» երկրորդ տարածաշրջանային սեմինարում, որին մասնակցում էին 7 երկրներ՝ Ալբանիան, Մակեդոնիան, Ռումինիան, Թուրքիան, Թուրքմենստանը, Ռուսաստանը եւ Հայաստանը, ամփոփվեց երեկ:

Մայրական մահացությունը կանանց կարգավիճակի եւ առողջապահության համակարգի զարգացման ցուցանիշ է: Եվ այն տեղեկությունները, որ յուրաքանչյուր տարի հղիության եւ ծննդաբերության հետեւանքով կես մլն կին է մահանում, այնքան հաճախ են կրկնվում, որ այլեւս զարմանք չեն առաջացնում: Մահացող կանանցից բացի շատերը տառապում են կյանքի ծանր պայմաններից:

Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) մշակած «Թվերից այն կողմ» ձեռնարկը ներկայացնում է մի շարք մոտեցումներ՝ սկսած մահերի քանակի հաշվարկումից մինչեւ դրանց առաջացման պատճառները: ԱՀԿ «Ապահով մայրություն» տարածաշրջանային ծրագրի համակարգող Ալբերտա Բաչին նշեց, որ սեմինարը նվիրվել է ԱՀԿ վերջերս ներդրած մի նոր, կարեւոր մոտեցման, որն առնչվում է ծննդաբերության եւ մահացության հարցերին: Ծրագրի համակարգողի խոսքերով, սեմինարի ընթացքում իրենք անդրադարձել են ձեռնարկի մեթոդներին, որոնց շնորհիվ հնարավոր է ուսումնասիրել մայրական մահացության, հիվանդացության դեպքերը, իսկ կոնֆերանսից հետո մասնակից երկրներից յուրաքանչյուրը կմշակի գործողությունների իր ծրագիրը, որը վեր կհանի մայրական մահացության հիմնական պատճառները: Տկն Բաչին նշեց նաեւ, որ սեմինարին մասնակցած երկրներում մայրական մահացության խնդիրն ավելի մեծ

է եւ այդ երկրները համարվում են ապահով մայրություն իրականացնող երկրներ: Իսկ յուրաքանչյուր երկրում մայրական մահացության պատճառները տարբեր են. «Ավելի հաճախ հանդիպում են գիպերտենզիայից՝ արյունահոսությունից առաջացած մահվան դեպքերի»:

Սեմինարի վերջում մայրական մահացության վիճակագրական տվյալներ չնշվեցին, քանի որ, ըստ տկն Բաշիի, կարելուրդ ոչ թե ցուցանիչները ներկայացնելն է, այլ այդ խնդիրները ուսումնասիրելն ու կանխելը: Սեմինարի ժամանակ առաջարկվել են նշյալ դեպքերի ուսումնասիրման մեթոդներ:

ՀՀ առողջապահության նախարարության բժշկական օգնության կազմակերպման վարչության գլխավոր մասնագետ Գայանե Ավագյանի խոսքերով, Հայաստանը մայրական մահացության միջին թվեր ունի. «Իհարկե, ավելի ցածր է ԱՊՀ երկրների ցուցանիչներից, բայց ավելի բարձր է եվրոպական երկրների ցուցանիչներից»: Նրա խոսքերով, մայրական մահացության հիմնական պատճառը հղիության ընթացքում ստացած վատ խնամքն է եւ խնդիրների դեպքում բուժիմնարկին ուշ դիմելը:

Տկն Ավագյանը նշեց, որ մինչ այժմ Հայաստանում մայրական մահացության կանխման համար օգտագործվում էր կլինիկական աուդիտը, երբ բուժիմնարկը վերլուծում էր մոր մահվան պատճառը, դրանք տրամադրում առողջապահության նախարարությանը, որն էլ փորձում էր հասկանալ բացթողումների պատճառը:

Սեմինարից հետո, մասնագետի խոսքերով, ընտրվել են մայրական մահացության կանխման եւ անվտանգ մայրության ապահովման 3 մոտեցումներ: Առաջինը կոնֆիդենցիալ հետաքննությունն է, երբ վերլուծվում է մահվան պատճառը՝ առանց նշելու բուժիմնարկի անունը՝ պահպանելով ուսումնասիրման օբյեկտիվությունը: Երկրորդ մոտեցումը կրիտիկական դեպքերի վերլուծությունն է, երբ կինը փրկվել է, բայց մեծ դժվարություններ են հաղթահարել թե՛ կինը, թե՛ բուժիմնարկը: Իսկ երրորդ մեթոդը վերբալ աուտոպսիան է, երբ մայրական մահացությունը եղել է տնային պայմաններում, եւ դրա պատճառների վերլուծությունը պակաս կարելուր չէ: Այս մեթոդների կիրառումը կօգնի կրճատել մայրական մահացության դեպքերը, որոնց կիրառման համար արդեն ստեղծվել է նախաձեռնող խումբ:

«ԱՐՄԵՆԻԱ TV»-Ն ԵՎ «ԱՐ ՈԱԴԻՈՄԻՉՍԱՅՐՑԱՍԱՔԱՅԻՆԸ» ՑԱՆԿԱՆՈՒՄ ԵՆ ԸՆԴԱՅՆԵԼ ՀԵՌԱՐՉԱԿՄԱՆ ՏԱՐԱԾՔԸ

Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովի երեկ տեղի ունեցած նիստում լսվեց «Արմենիա TV» փակ բաժնետիրական ընկերության մրցութային առաջարկությունների փաթեթը:

Հանրապետության մարզերում 17 կապուղիներով հեռուստահաղորդումների հեռարձակման լիցենզիա ստանալու ցանկություն ունի «Արմենիա» հեռուստաընկերությունը: Այդ կապուղիները զբաղեցնելու նպատակով հայտարարված մրցութային միակ մասնակիցն է «Արմենիա TV»: «ԱՐ ռադիոմիջմայրցամաքային» ՍՊԸ-ն նույնպես մրցութային առաջարկների փաթեթ է ներկայացրել Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողով, հանրապետության 9 բնակավայրերում նույնաքանակ ռադիոհաճախականություններով հեռարձակման լիցենզիա ստանալու համար: Երկու ընկերությունների ներկայացրած փաթեթների պատասխանները հրապարակվելու են հուլիսի 18-ին:

Իսկ երեկ Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովը վերածեակերպել է «Էյ ԱՓ» հեռարձակող փակ բաժնետիրական ընկերության լիցենզիան: Լիցենզիայի վերածեակերպման խնդրանքով ընկերությունը դիմել էր ՀՌԱՀ՝ նստավայրի իրավաբանական հասցեի փոփոխության պատճառով: Երեւանի տարածքում հեռուստահաղորդումների կաբելային հեռարձակման լիցենզիա տալու հարցը եւս քննարկվել է ՀՌԱՀ նիստում: Եվ այսուհետեւ միայն Մալաթիա-Սեբաստիա համայնքում հեռուստահաղորդումների կաբելային հեռարձակող «Տելետոպ» ընկերությունը կաբելային հեռարձակում կիրականացնի մայրաքաղաքի ողջ տարածքում: «Տելետոպի» հեռարձակումը կընդգրկի Երեւանի 7 համայնքները: Այդ իրավունքն ապահովող լիցենզիայի դիմաց ՀՌԱՀ որոշմամբ «Տելետոպ» ընկերությունը պետական բյուջե է վճարելու 500 հազար դրամ:

Մշակութային

Վահան Գևորգյան

1950-

Ծնվել է Երևանում, ուսուցիչների ընտանիքում: Իր առաջին ուսուցիչներն եղել են ծնողները, մայրը՝ գրականության, իսկ հայրը՝ կենսաբանության ուսուցիչ: Ծնողների աշխատանքի բնույթի պատճառով, նա ապրել է գրեթե Հայաստանի բոլոր շրջաններում: Դպրոցն ավարտել է Վաղարշապատում որից հետո ուսումը շարունակել է Երևանի Պետական Համալսարանի Ֆիզիկայի Ֆակուլտետում:

Սովետական բանակում ծառայելուց հետո, աշխատել է Արագածի Տիեզերական Մասնիկների Հետազոտությունների Կայանում (USUՀԿ) և այլ գիտահետազոտական հաստատություններում:

Նրա գրական գործերից տպագրված են՝ «Այբ Բեն Գիւն» 1999 թ. նվիրված Մեսրոպ Մաշտոցին, «Մեղեդի» 2000 թ. նվիրված գոհված Մուշեղ Գազանյանին, «Կանայք» պատմվածքների ժողովածու 2003 թ., «Մեր հոգսերի ձմեռը 1993թ» 2004 թ., «Սոնետներ» 2005 թ.:

Վահանը հաճախ հանդես և գալիս տեղական մամուլի էջերում, հիմնականում գրելով գրականության մասին և տարիներ շարունակ հեռուստատեսությամբ ներկայացրել է մեր գրական մշակներին:

2005 թվականին Իրանահայ Միության Արվեստի և Գեղարվեստական Բաժանմունքի նախաձեռնությամբ, մեծ շուքով կատարվեց նրա «Սոնետների»-ն նվիրված գրական-երաժշտական երեկոն:

Երեկոյի առանցքային կազմակերպիչն ու ղեկավար բժիշկ Հրաչ Վարդանյանը, որը հանրությանը ներկայացրեց «Սոնետներ»-ը արտասանելով սոնետների մեծ մասը:

Վահանը այժմ ապրում և ստեղծագործում է, հայրենիքից հեռու Լոս Անջելեսում:

ինչն է Վահանի բանաստեղծության մեջ ինձ հետաքրքրել և ինչու եմ որպես ստեղծագործողի նրան հավանում:

Հարուստ հուզաշխարհով բանաստեղծներ մենք շատ ունենք, բայց հարուստ հուզաշխարհը դեռ բանաստեղծության նպատակը չէ:

Բանաստեղծությունը ինքը լինելով կարճ ու հատու խոսք, շահում է և ավելի հարազատ դառնում ընթերցողին, երբ հույզին շաղախվում է տրամաբանությունը:

Հույզով լեցուն ու տրամաբանությամբ հարուստ տողերը երբ արտահայտում են ստեղծագործողի ինքնաբերական նպատակային սերը առ հայրենիք ու նրա ակունքը, դառնում են ինձ համար հոգեհարազատ: Այդ ոգով ստեղծագործողները նախորոք են կանխորոշում իրենց տեղը մեր հարուստ գրականության մեջ: Ահա նրանց շարքումն է Վահան Գևորգյանը որ իր գրած մի բանաստեղծությամբ՝ «Մեղոն» դրսևորում է իր ամբողջ ներաշխարհն ու նպատակները՝

Մեղրահացին փարված

Լաց է լինում մեղուն

Իր հոգևության համար,

Իր տխրության համար,

- Օտիկներից խաբված,

Ու իր բախտից դժգոհ,

Նա չէր կարող պատմել

Մեղուններին օտար ...

- Մինչդեռ մարդիկ դարեր

Այն մասին են խոսում.

-Թե երգում է մեղուն,

Մեղր գտած մեղուն ...

Օտիկներից խաբված,

Ու իր բախտից դժգոհ,

մեղրահացին փարված

Արտասվում էր մեղուն...

Տողերից, պարզ երևում է որ հեղինակը լավ գիտի իր տեղը գրականության մեջ և մեղվի ջանասիրությամբ կառուցում է իր Գրական աշխարհը:

Ինչպես մեզ բոլորիս հայտնի է, համեստությունը մեղվի արժանիքներից մեկն է և այդ նյն արժանիքը՝ համեստությունը, մենք տեսնում ենք Վահան բանաստեղծի մոտ: Վահանը երբեք իրեն թույլ չի տալիս և հավակնությունն էլ չի ունեցել համեմատվելու մեր մեծերի հետ, դեռ ավելին տարիներ շարունակ ինքն է հանդիսացել այդ մեծերին հասարակությանը ներկայացնելու գործում:

Այս գիշեր ձեզ պիտի ներկայացնեմ Վահանի գրած «Սոնետներ»-ը, բայց նախ և առաջ մի կարճ բացատրություն այդ առթիվ:

Սոնետը բանաստեղծության կարևոր ձևերից մեկն է, որը բաղկացած է 14 տողից, առաջին երկուսը քառատող է և վերջի երկուսը եռատող կամ ըստ Լատիների՝ երկու կատրե-ից և 2 տերցետ-ից: Սոնետի հանգավորման ձևերը բազմազան են, նրանք սկիզբ են առել վերածնության դարաշրջանում Իտալիայում:

Իտալական գրականության մեջ նշանավոր են Դանտեի և Պետրարքայի սոնետները: Իտալացիներից հետո, Շեքսպիրը գրեց իր 154 սոնետները հիմնականում սիրո թեմայի վրա, որոնք հրատարակվել են իր մահից հետո: Շեքսպիրի գրած սոնետները համատարածվեց ամբողջ Եվրոպայում և գրական դասիկաների Խոսակցության մեծ թեմա էր:

Շեքսպիրի սոնետները արագ թարգմանվեցին Եվրոպայի բոլոր քաղաքակիրթ լեզուներով, բերելով մեզ ճանաչում Շեքսպիրին որպես սիրո երգչի:

Արևմտահայերն էլ թարգմանեցին այդ սոնետները և ավելի շուտ սկսեցին սոնետներ գրել քան արևելահայերը:

Մեր օրերին երբ Պարույր Մևակը գրում էր իր մենագրությունը Մայաթ Նովայի մասին, նա համարձակորեն սիրո երգիչ՝ Մայաթ Նովային համեմատեց Շեքսպիրի հետ: Նախ ինքը մնաց ավի ի բերան զարմացած որ Մայաթ Նովան չիմանալով անգլերեն և չճանաչելով Շեքսպիրին, հարյուր տարի անց Շեքսպիրից հասել էր նույն գեղագիտական արդյունքին և զարմանալին այն էր որ Մայաթ Նովայի մոտ ավելի կատարյալ էր սիրո մեկնաբանությունը:

Արևմտահայ գրողները սոնետ բառն էլ հայերենի թարգմանեցին որպես «Հնչակ» և այդ բառն առ այսօր օգտագործվում է արևմտահայերի կողմից:

Արևմտահայերից սոնետներ գրեցին՝ Մեծարենցը, Թեքեյանը և ուրիշներ, իսկ արևելահայերից՝ Տերյանն ու Չարենցը:

Չարենցից հետո նորերից սունետներ են գրել՝ Հենրի Էդոյանը, Վահանի սերնդակից Արմեն Շեկոյանը և Վահան Գևորգյանը:

Այս վերջի երեք հեղինակները գրեցին սունետների շարք որը կոչվում է «սունետների փունջ», որովհետև շարքի 15-րդ սունետը ընդգրկում է նախորդ 14 սունետների առաջին տողերը և այդ իսկ պատճառով 15 սունետների կանոնակարգի շարքը կոչվում է «Փունջ»:

Շեքսպիրի 154 սունետներից, երեսունը թարգմանել է Գևորգ Էմինը որն ի միջի այլոց ամենալավ թարգմանություններից է համարվում:

Վահան Գևորգյանի գրած սունետներից երևում է որ նա լավ տեղյակ լինելով Պետրաքային, Դանթեին, Տերյանին, Չարենցին և մյուսներին, նորից սիրո թեման է արծարծում, բայց ի տարբերություն մյուս հեղինակներին Վահանի արծարծաց սիրո թեման ավելի տարողունակ է դարձել իր ընդգրկման տարածքով:

Վահանի մեկնաբանած սերը, մանկան սերն է մոր հանդեպ, պատանու սերը՝ սիրածի, Բմաստացած մարդու սերը իր կնոջ, զավակների և հայրենիքի հանդեպ, և այդ բոլոր սերերի կիզակետն է՝ հայրենիքի սերը:

Հանձնիս հեղինակի սերը իմաստավորվում է հայրենիքով:

Հեղինակը պնդում է որ եթե կա հայրենիքի սերը, ապա մյուս բոլոր սերերը արժևորվում են հենց այդ սիրո շուրջ: Ահա այս է Էական տարբերությունը Վահանի սունետների և մյուս բոլոր սունետների որոնք սիրո մասին են գրվել:

Թերևս Վահան Տերյանի երկու սունետներից մեկը մորն է նվիրված, իսկ մյուսը «Թշվառ, անտեր և որբ հայրենիքին»: Չարենցի վեց սունետներն էլ Խանջյանի մասին է:

Վերջում կուզեի է ավելացնել որ հեղինակը հետաքրքիր լուծում է գտել Արագածի և Արարատի կերպարներում և շատ ուրախալի է որ նա լինելով գիտությանը ծանոթ մարդ, ինքնատիպ մեկնաբանել է խաչի և թրի այլափոխումները, որի պատճառով էլ մենք այս օրերին ենք հասել:

Վահանի լավատեսությունն այնտեղում է որ նա հավատում է որ մենք վերջապես պիտի հաղթենք «Խաչ-ա-թուր» խաղում թրով միայն, ինչպես հին թևավոր խոսքն է ասում՝ «ԿԱՄ ՎԱՀԱՆՈՎ ԿԱՄ ՎԱՀԱՆԻՆ»:

Կարոտում եմ քեզ հայրենի եզերք,
Քո հող ու ջրին, արևին հրկեզ,
Օտար երկրում աչքս միշտ արթուն,
Հոգիս ծո վ արյուն, օրը'ս չի՝ մթնում:

Անթև հավքեր են խոսքերս թվում,
Հույս ու երազանք մարում է մթնում:
Օրերն են չվում տերևների պես
Հոտում, գնում է, ժամանակն անտես:

Աշնան օրերը դավերով լեցուն,
Երազախաբի կսկիծով անանց

Սիրտ են սողոսկում, երակով թույն:

Մտքերս մուրճ՝ զուրկ են թևերից,
Շուրթերիս փարված խոսքերի նման
Չունեմ հանգրվան ու խաղաղ օրրան:

Չունեմ հանգրվան ու խաղաղ օրրան
Արդեն հազար դար ես թափառական,
Գիծն հորիզոնի միշտ հեռվում մնաց,
Աչքս մաշեցի չհասա նրան ...

Ամենուր եղա, երկրներ տեսա,
Դռները օտար իմ դեմ բացվեցին,
Տանտիրոջ կողքին հավասարի պես
Շենացրրեցի երկիրն հյուրնկալ:

Եվ ամեն անգամ, և ամենուրեք
Կասկած ու կսկիծ սիրտս սողոսկեց
Պագշոտ կնոջ պես օրըս պղտորեց:

Ու շրջապատված բոլոր կողմերից
Մի կերպ դուրս պրծա որոզայթներից
Բախտից հալածված գազանի նման:

Բախտից հալածված գազանի նման
Ճակատագիրը ինձ բաժին թողեց՝
Հույսին միամիտ, հուսալով՝ հույսից
Դարեր շարունակ ապրեցի այսպես:

Ես ի՛նչ իմանամ, որ պապիպապի
Ճամբան եմ հիմա վեր ու վար անում,
Երբ հորիզոնն է անվերջ հեռանում,
Մասիսն է միայն մերը մնայուն:

Խոսքերն ամենուր կուչ եկան անքեն
Մտքիս խորշերում քեզ եմ փնտրում,
Նման եմ հավքի՝ թևաթափ մուրր:

Մայթերին դաջված աստղերն այստեղ
Դարձի ճամբեքին ական են ու արկ,
Գիծն հորիզոնի մթան մեջ կորավ:

Գիծն հորիզոնի մթան մեջ կորավ
Ականապատված ճամբան է լեցուն
Վառ աստղերի սին անուններով
Նրանք լուսավոր՝ պաղ են ու օտար:

Մըրրկավ զարկված տղերքը ընկան:
Գնում են հաճախ ճամբով գերության
Հարս ու աղջիկներն հայրենի մեր տան,
Խաբվում են Դատարկ աղբ ու հուլունքով:

Քամիները հին նոր երգ են բերում,
Շրջանակի մեջ աշխարհն է օրվա
Աճուրդի հանվում որպես հին մասունք:

Եռաբլուրից մինչև Ավարայր,
Հայոց աշխարհի փառքերն են ընկած,
Արարատ լեռն է տերը տարածքի:

Արարատ լեռն է, տե՛րը տարածքի.
Իմ հայրենիքը հողմերից մաշված
Հարևաններից անվերջ հալածված
Ժայռածաղիկ է, արև՝ հրկիզված:

Գալիս են գնում քարավանի պես՝
Մերունդներն անվերջ, ծե՛ս է երկունքի.
Լեռը՝ քրմերի քրմապետնը հավերժ,
Փոխում է գենը՝ օձ ու զեղունի:

Հորիզոնի դեմ Լեռան նայվածքից
Հայության հզոր ավազանի մեջ,
Վերածնվելով հառնում են հողից:

Թեև հայերեն չեն խոսում հաճախ,
Բայց հայանում են հողից աղոթված՝
Նահատակների հայացքից գերված:

Նահատակների հայացքից գերված
Շողում ու թունոտ մոզում են հիմա
Նոր օտարները՝ հին երկիր մտած
Ու Արարատը խորհում է անձայն:

Մեր լինելության աստվածն հավետ,
Բախտի փոխարեն մեզ հույս նվիրեց:
Հույսի տաճար է լեռը Նաիրյան...
Եվ դարն է անցնում վայրկյանի նման:

Շատերս հիմա նավագներ հեռվում,
Կայմերը պարզած խախուտ լաստերով
Տնից հեռանում, տանը կարոտում:

Քշված հողմերից բաց տարածքներում.
Լոկ Արարատի պատկերն է մեր մեջ:
Գիծն հորիզոնի հեռու է անդարձ:

Գիծն հորիզոնի հեռու է անդարձ:
Մեր հողի համար մենք դարեր համառ
Թափեցինք արյուն, արցունք-քրտինքով
Հողին պահ տված ցորենն ենք արդար:

Յորենն ենք արդար հույսերով լեցուն,
Թոնրրից ելած հացն հանապազոր:
Նման ենք վազին պոկված մայր հողից՝

Արմատ երկնող ակունքն է հզոր:

Հրաժարվում ենք օտար արմատից,
Ինքնության հզոր բնագրով կրկին
Արմատակալում, ճյուղ ենք արձակում:

Թե ուրիշներին թաղում են հողում,
Մենք հողին կպած՝ որթատո՛ւն կրնն
Վազն ենք խաղողի՝ արևով լեցուն:

Վազն ենք խաղողի՝ արևով լեցուն,
Մտքով պլացիկ՝ երկինք ենք ձգվում,
Երբ հողից հառնում, սահմանագիծը
Գիծ հորիզոնի մեզ տուն է կանչում:

Գինու գովքն ասում, հիշում ենք նրանց՝
Նահատակներին ճամբեքին զոհված,
Հաց ու գինով ենք սեղան զարդարում,
Արյուն-քրտինքով՝ ողջերին օրհնում:

Մեր բաժին բախտը հույսով է լեցուն
Մասիսի նման մեզ էլ են կիսում,
Թղթե՛ր ի վրա, օտարն՝ ի մտքում

Հազար տարին էլ վայրկյան է թվում,
Մեր ապրած պահը չնչին ակնթարթ
Վկան հավերժող՝ լեռը Արարատ:

Վկան հավերժող լեռը Արարատ,
Չունեմ հանգրվան ու խաղաղ օրբան
Դեռ թափառում եմ գիշեր ու ցերեկ,
Բախտից հալածված գազանի նման:

Օրըս չի մթնում, հոգիս ծով արթուն,
Այս էլ քանի՛ դար, դարիք եմ պանդուխտ...
Ճակատագի՛րը, ինձ նորից նետեց
Ականապատված երկիրն այս օտար:

Կասկած ու կսկիծ սիրտս սողոսկեց,
Մթում մարում է հույս ու երազանք
Ժամանակն անտես գնո՛ւմ է, սողում:

Հին քամիներին նոր շունչ են բերում,
Խոսքերը նորոգ՝ փոխված իմաստով
Աշխարհն են կրկին տանում աճուրդի:

Աշխարհն են կրկին տանում աճուրդի:
Հին քամիներին նոր շունչ են բերում,
Մարդացման ճամփին՝ մարդ արարածին՝
Հուսալքումի քարով են զարկում:

Մահվան, սարսափի շրջապտույտում,

Հրեշտակները փոխված սատանի՝
Նոր աստվածներ են անվերջ հորինում,
Խաղին խառնվում, լույս ու խավարի:

Եվ ամենուրեք արցունքի շիթեր,
Եվ ամեն անգամ քանդված երկիր,
Երգի փոխարեն դառնաղի արցունք:

Ցավից խելագար աշխարհն է դառնում
Խենթերն ամենուր՝ այրեր իմաստուն,
Ջրհորից բախտի քարերն են հանում:

Ջրհորից բախտի քարերն են հանում,
Ինչպես հեքիաթում այս հին աշխարհի
Կրտսեր խելոքին մի օր հանեցին՝
Դիմագրկելով չար եղբայրներին:

Շատերն են հիմա ներքուստ պարծենում,
Իմաստուն այրի թիկնոցն ուսերին
Մանկան պես անմիտ նորից խառնվում
Լույս ու խավարի նույն մենամարտին:

Հայաստան աշխարհի հավիտենական,
Չորս գետերը քո գոտիդ արծաթյա՝
Ճարմանդի զարդն էլ Անին է ու կա:

Արարչագործման հովիտն է փոված
Արագած լեռան չորս գլուխներին,
Արարատ լեռան հայացքի դիմաց:

Արարատ լեռան հայացքի դիմաց
Հին հազարամյա քաղաքն է մանուկ,
Որն հարյուրամյա ակնթարթ ապրեց
Շենշող ու հպարտ աշխարհին նայեց:

Իմ խանդոտ սերը, իմ երազների
Լուսաշող տունը, ի մ Երևանը,
Հին՝ արևելքի, նոր՝ արևմուտքի
Ճամփեքին ներկա քարեղեն վարդը:

Մատենադարանը տաճարն է մտքի
Բեռը դարերի մագաղաթ է գառ՝
Վկան մեր ապրած բոլոր պահերի:

Փորձ ու գիտելիք մեզ փոխանցելով
Ականջալուր էին ձայնին երկնի
Մեր նախնիները մտքով իմաստուն:

Մեր նախնիները մտքով իմաստուն
Ուխտավոր անդուլ՝ լույս ու արևի,
Ծով ալիքների տենդը սրտի մեջ
Ալիքված գալիս ու ետ են դառնում:

Գիծն հորիզոնի պարզ է երևում
Երբ ծով ու երկինք իրար են փարվում
Մենք ծովից հեռու լեռներին թառած
Արծիվ ու բազե կապույտից գերված:

Միջատ ու մլակ, զեղուն ու սողուն
Կապույտի վրա բնավ չեն նստում
Թնազուրկ են, թո՛ւյլ ու թո՛ւյն մահացու:

Լեռների գրկում մեր Արարատյան
Դաշտն է բերքատու, մայր ու արարիչ,
Ականջալուր ենք մենք Արարատին:

Ականջալուր ենք մենք Արարատին:
Երկինք ու երկիր իրար են փարվում
Լեռան գրկի մեջ տապանն է հանգչում
Արարչագործման վկան է հավերժ:

Իչքան էլ կիտվի խավարը խրթին,
Դաշտը ներխուժեն սողուն ու զեղուն,
Մեր կամքով համառ, հավատքով՝ անմար
Սահմանագիծն ենք բարի ու չարի:

Ու զավակները վեհ Արարատի
Գիտեն՝ արարել, երկնել գիտեն,
Շանթից էլ զորեղ, կործանել գիտեն:

Գիծն հորիզոնի չի մնա հեռվում
Հավասարության նժարն իմաստուն
Մեր երազների ակունքն է մաքրում:

Կարոտում եմ քեզ հայրենի եզերք,
Չունեմ հանգրվան ու խաղաղ օրրան
Բախտից հալածված գազանի նման՝
Գիծն հորիզոնի մթան մեջ կորավ:

Արարատ լեռն է տերը տարածքի
Նահատակների հայացքից գերված
Գիծն հորիզոնի հեռու է անդարձ
Վազն ենք խաղողի հավատով լեցուն:

Վկան՝ հավերժող լեռը Արարատ,
Աշխարհն են տանում կրկին աճուրդի,
Բախտի քարերն ենք ջրհորից հանում:

Ականջալուր ենք մենք Արարատին:
Մեր նախնիները մտքով իմաստուն
Մեր երազների ակունքն են մաքրում:

Օրս լեցուն է աշնան գույներով,
Երկինքն է շիկնում մրգի պես հասուն

Ծով կապույտի մեջ արևն է լողում,
Դավադիր քամին այքով է անում:

Դավադիր քամին ծառի շվաքում
Օդի մեջ պահված ջահելի նման՝
Աչքը երկնքի կապույտին պարզած
Արեգակին է նույն խանդով նայում:

Աշուն է հասուն ու հողը շիկնած
Հոգնած ուժասպառ, հասցնում է դեռ
Մեկ առ մեկ հաշվել գառ տերևներին:

Ճյուղերից թափվող տերևների պես
Երագի նման վաղանցուկ, խելառ,
Անցա՛ն-գնացին, հույզերս բոլոր:

Անցան-գնացին հույզերս բոլոր:
Միրտս թափուր է, մտքով թափառում
Դեռ վիատության ափին չհասած
Ծովի պես ծփում, ճոճվում եմ տեղում:

Հիշատակներս ցուլքեր են լուսե
Առաջվանը չեն կանայք էլ գերող,
Անկիրք, անկրակ, ապրում ենք, տնքում,
Պաղ աստղի պես մտքում առկայծում:

Խանդի քարերն են հոգուս մեջ սուզվել
Հետքն է մնացել, վկա՛ Ն հույզերի՝
Կնճիռ ու ծալքը, նոր գարդ են դեմքի:

Անցածը վաղուց՝ երագ է անդարձ,
Գինուց էլ թունդ է, ծփում է սրտում:
Կյանքն էլ վազող ալիք է թվում:

Կյանքն էլ վազող ալիք է թվում
Անցած-գնացած օրերի շարքից
Ես իմ մանկության արևն եմ տենչում՝
Մորս պես անվերջ նա է իմ մտքում:

Երկիրն իմ հպարտ, արևով լեցուն,
Ուր տանիքներին՝ հարթ ու տափարակ
Արևից թաքուն, մրգերը հասուն
Գողանում էին լույս ու ջերմություն

Ձմռան երկարող գիշերվա գրկում
Տատ ու պապի պես տան առատություն
Արևով լեցուն չորացած մրգեր:

Տարիներն անցան, մենք բարին՝ չարից,
Ձեր տաք ափերով գատեցինք անցավ:
Աշխարհը տեսանք մտքի թևերով:

Աշխարհը տեսանք մտքի թևերով:
Ճնճողուկներին մանուկ տարիքում
Տան փշրանքներով միշտ կերակրում
Ծաղում էինք անմիտ-միամի՛տ:

Ծիծաղում էինք, որ տանն են մնում,
Երկիրն հայրենի չեն լքում բնավ,
Քաղցից մարում են, տոկում են հպարտ,
Մայր հողում թաղվում ցրտից նահատակ:

Հիմա հիշում եմ ու սիրտս տրտում
Այս աշնան շեմին ո՛նց է արտասվում
Ճնճողուկի չափ չեղանք իմաստուն:

Անհեթե՛թ վերջից մենք շատ վախեցանք,
-Թե՛ աշխարհն արար շրջելու թաքուն
Կիրքը հարատև մեր սիրտն էր լափում:

Կիրքը հարատև մեր սիրտն էր լափում,
Եվ ամենուրեք ողջախոհության
Սափորն ենք ջարդում գիշեր ու ցերեկ,
Ողորկ քարերով գայթակղության:

Մեր շուրջն ամենուր աշխարհն է փոխվում
Երեկվա փառքը օտարի տված՝
Չափ ու չափանիշ, գլխիվայր շրջվում,
Պարսավագիր է մեզ համար դառնում:

Խեղճ ու միամիտ՝ օտարին լսում,
Տանը, թե դրսում, չենք ամբողջանում
Կոտորակված ենք ու բազմաբևեռ:

Հյուսիս ու հարավ՝ լայնք ու երկայնքով,
Վերից ու վարից՝ ելք ու մուտք խառնում
Բազե-արծիվ ենք օտար երկնքում:

Բազե-արծիվ ենք օտար երկնքում,
Մեր գետերի պես գնում ենք կորչում
Օտար ծովերի պղտոր ջրերում:
Թե՛ դեկապետ ենք, նավերն են օտար:

Թե տնատեր ենք, ունե՛նք դոլյակներ,
Մեր ունեցածը՝ մերը չէ՛ ավաղ,
Երկրից հեռու՝ օտար հողերում
Գայթելու անթիվ քարեր կան ողորկ:

Ջանք ու եռանդ ենք ամենուր վատնում
Մեր խռով հոգին անդորրի կարոտ
Միրտ չի ափովում, և գո՛ւր ենք տենչում:

Խաղաղ հանգրվան ու տուն երագում,
Դարձի ճամփեքին ահերով իր մութ
Թշնամին մեր հին՝ բնավ չի՛ փոխվում: